Մակարդային և յերիթավոր միացումների տեսակները (ուղիղ մակարդ, թաթավոր ուղիղ շպոնայներ, յերիթներ յերեսից, տակից և դուրս ցցված մասով, թաթավոր շեղ) :

Բանվածքներ, վորոնց մեջ նրանք գործադրվում են (վահանաներ, նկարների, մոդելների և բնական նմուշների ցուցադրում) :

#### 2. Մակարդային միացումներ կատարելու հրահանգում :

### III. ՄԱԿԱՐԴԱՅՑԻՆ ՅԵՎ ՇՊՈՆԱՎՈՐ ՄԻԱՅՑՈՒՄՆԵՐՈՎ ՊԱՏՐԱՍՏԱԾ ՓԱՅՏԵ ԿԱՌՈՒՅՑՎԱԾՔՆԵՐ (2 ժամ)

1. Բանվածքի ընտրությունը . աշխատանքների պլանավորումը : Յուրաքանչյուր ոպերացիայի և ամբողջ բանվածքի նորմավորումը :

2. Բանվածքի պատրաստելը :

Վորպես արտադրական աշխատանքի որյեկտոներ համձնարարվում և պատրաստել հետեւյալ իրերը .

1) Գծադրական տախտակ, 2) Ելեկտրոտեխնիկական աշխատանքի վահաններ, 3) պատի վրայի ամրացվող զանազան գարաններ՝ մակարդասուցած բարձակներով . 4) Փիղ . կարինետ և քիմ . կարինետի գործիքների տակ դնելու պատվանդաններ պլաններով . կամ վտաներով . մակարդակած կամ շլոնկաների ձևով . 5) սեղանի վրայի վահաններ՝ պլակատների ու հայտարարությունների համար (շպոնկաներով . կամ մակարդակողներով) . 6) պահարանի դռներ (գեղարկել, գործիքների պահարան շպոնկաներով . կամ մակարդակողներով) :

### IV. ԲՆԱՓԱՅՏԻ ՄՇԱԿԵԼՈՒ ՀԱՍՏՈՑՆԵՐ (2 ժամ)

#### Ա. ԲՆԱՓԱՅՏԻ ՍՂՈՑԵԼԸ (1 ժամ)

ա) Բնափայտի սղոցելը . բոլորակտուր սղոց, նրա նշանակությունը : 3 մասերը՝ շարժող մեխանիզմ, փոխանցող մեխա-

նիզմ և կատարող մեխանիզմ։ կատարող մեխանիզմի սկավառակների տեսակները և չափերը։ յերկայնահատ, միջակտուր սղոցների ատամների ձևերը։ Սկավառակների տառապումը։ Հոլանը և նրա դետաները, հենոցները, սեղանի վրայի կափարիչը կարգավորելը՝ սկավառակի ցցվող մասի վերաբերյալ։ Ուղղություն ցույց տվող քանոնները, յերկու մասի բաժանող դանակը, պաշտպանության և նյութը մասուցող հարմարանքները։ Անվտանգության տեխնիկան։ Սղոցի հարմարանքները՝ բութակների ունիելը և ազուցավոր կտրվածքներ սղոցելու համար։ բոլորակտուր սղոցի վրա աշխատելու կանոնները և նրան խնամելը, յերիշասղոց։ նրա նշանակությունը։ Յերիդների փոկանիւնների հենոցը սեղմող և ուղղություն տվող հարմարանքների կազմությունը։ Յերիպալոր սղոցով աշխատելու կանոններն ու նրա խնամելու յեղանակը։

Մեկ ժամ վարժություններ դասարանի ամբողջ աշակերտների համար։ № 1 աշխատանքի համար բոլորակտուր սղոցով նյութպատրաստելը։ Աշակերտների աշխատանքները տարվում են դաստուի ղեկավարությամբ և հսկողության տակ։

#### Բ. ԲՆԱՓԱՅՏ ՈԱՆԴԵԼ (1 ժամ)

Գուգանի հաստոց։ Նրա նշանակությունը։ Հաստոցի արտադրողականությունը։ Հաստոցի 3 մասերը—շարժիչ, փոխանցող, կատարող։

Կատարող մասում—հոլանը դանակներով, առանցքակալներով և փոկանիվով, հենոց, սեղանի վերևի մասը—սեղանի վերին մասի կարգավորումը հոլանի դանակների վերաբերյալ։ Ուղղություն տվող անկյունարդներ պաշտպանող և նյութը մատուցող հարմարանքներ։ Գուգանի հաստոցի վրա աշխատելու կանոնները և նրա խնամելը։

Ծանօթություն։ ույսմասի հաստոց (նկարներով և պլակատներով)։

Վարժություններ։ № 1 բանվածքի համար ֆուլանի հաստոցի վրա ռամփելը, աշխատանքը կատարվում է դաստուի անմիջական ղեկավարությամբ և նրա հսկողության տակ։

#### Վ. ԵՔԱԿՈՒՐՍԻԱ (3 ժամ)

Բնափայտի կտրելը ժամանակակից վայտամշակման հաստոցների վրա (գործարանի ցեխը, կամ մեքենայացրած արհետանոցը, սղոցարանը)։

1. Հաստոցավորի աշխատանքի տեղի կազմակերպումը, 2) հաստոցները տեղավորելը, նրանց կառուցվածքը։ Պաշտպանող հարմարանքները, 3) աշխատանքի յեղանակները, 4) աշխատանքի արտադրողականությունը, 5) բանվածքի դեմակների մշակման հաջորդականությունը—տեխնոլոգիական ուղին մեկ հաստոցից դեպի մյուսը։

Եքսկուրսիանիւնների կազմակերպումը, պլանավորումը, անցկացնելը և աշխատանքների հաշվառումը։

#### VI. ԴԵՏԱԼՆԵՐԻ ՄԻԱՅՆԵԼԻ ԲԱՅ ԹԱԹԱՎՈՐ ԲՈՒԹԱԿՆԵՐՈՎ (1 ժամ)

1. Թաթավոր բութակներով արկղեր միացնելու տեսակները (բաց, կիսաթափնյած և թագնյած), վորոնք բանվածքներում դորձադրվում են։

2. Արկղային բութակներ պատրաստելու համար անհրաժեշտ գործիքներ—նչողություն, գծագրող, բեյսմուս-մշակող բութակտրիչ սղոցներ, դրեր՝ փորելու համար։ Բութակտրիչ հաստոցներ (նկարների պլակատների, աշխատանքների և մողելների ցուցադրում)։

#### VII. ԱՐԿՂԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ. ԴԵՏԱԼՆԵՐԻ ՄԻԱՅՆԵԼԻ ԹԱԹԱՎՈՐ ԲԱՅ ԲՈՒԹԱԿՆԵՐՈՎ (2 ժամ)

Վորտես արտադրական աշխատանքի որյեկտներ աշակերտներին հանձնարարվում ե պատրաստել հետեւյալ իրերը՝

Պատին կախելու կամ վակյնելու բութակավոր արկղներ, կուելցիայի, դեղերի, փոքր գործիքների համար և այլն. 2) արկղներ՝ միջատների, հողի, հանքարանական որյեկտների և այլ հավաքածուների համար. 3) սեղանի վրա դնելու փոքր արկղներ և տուփեր, մանր իրեր (մատիտ, ծրար, գրիչ, քորոց, ասեղ և այլն) դնելու համար, դ) արկղների պատյաններ ֆիզիկական և քիմիկական գործիքների համար։

#### VIII. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ (1 ժամ)

Բնափայտի նշանակությունը շինարարական աշխատանքներում, կառուցումներ փայտից, շինարարական դեմակներ, նրան-

ցում ժամանակավոր կառուցումներ (բնակարաններ, կամուրջներ, Փերմաներ, ծածկեր, լուսամուտներ, դռներ, հատակներ, սանդուխներ շինարարական լաստակներ և այլն) :

2) կառուցողական կապակցումների (ըլապահություն) համակցումների (սրացման համական յեղանակները :

3. Վարժություններ շինարարական համակցումների և կապելով միացնելու մողելներ պատրաստելու ուղղությամբ :

4) Աշակերտների արտադրական աշխատանքների որբյեկտներ՝  
1) բներ փոքր կենդանիների և թռչունների համար ճաղարաններ, աղավնաբուն, հավաքուն և այլն, 2) վերելակներ և սանդուխներ, 3) դաշտային և բանջարանոցային բուրկաներ, 4) փոքր ծածկեր, 5) մանկական շարժական տրիբուններ, 6) զանազան տիպի կամուրջների մողելներ՝ առավելի, գետի, յերկաթզածի, 7) բնակելի շնորհների մողելներ փայտից :

## II ՄԵՏԱՂՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԸ ՑԵՎ ՄՇԱԿՈՒՄԸ

2-րդ ժառորդ

ԽԱՌԱՏԻ (ՏՈԿԱՐԻ) ՀԱՍՏՈՑ ԿՑՐԵԼՈՒ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆՆԸ  
(7 ժամ)

Հենոցը պտտելով հաստոցը տեղակայել կոնսյին շրջատաշ կատարելու համար :

1. Հաստոցի վրա գլանային և կոնսյին շրջատաշ կատարելու, (ձեռքի մատուցմամբ), կարգը նույնն է, ինչ վոր 6-րդ դասարանում։ Բայ պտույտների բանակի հաստոցը տեղակայում և ինչպես 6-րդ դասարանում ինքը դաստուն։

2. Նախընթաց տարում ողորած ողերացիաների գործադրությունն ավելի բարձր ճշտության նորմաներով բանվածքներ պատրաստելու համար։

Պատրաստելու համար աշակերտներին հանձնարարվելիք որբյեկտներ՝ նրբասղոցի հաստոց, փոքր դայկաների բանալիներ, պտույտակամամուներ, գրչահատ, փայտայա հասարակ փոկանիք պարզ դետալներ։

Աշխատանքների բնութագրությունը առաջ սովորած ուղեցույցի առանձնահատկությունների հետ :

Առաջին փորձ աշխատանքների ճշտությունը ձողակարկինով (շտանգեն ցիրկուլ), չտվելու միջոցով։

Առարկայի կառուցվածքի մշակումը կատարվում է դասարանում դասատուի նախորդը կազմած ենթակային գծադրումի միջոցով։ աշխատանքները կատարում են աշակերտների աշխատանքը բաժանման սկզբունքով, յուրաքանչյուր աշակերտին տալով առանձին սեպարացիսաւ աշխատանքի պլանն, ինչպես և բաժանումը կատարվում է դասարանում կոլեկտիվորեն գասատուի ղեկավարությամբ։

Առարկայի բացառությունը, ցուցադրումը և պատրաստելը (3 ժամ)։ Աշխատանքի բնութագրումը, վերասուլգման պահանջներ յուրաքանչյուր աշխատանքային կետի նկատմամբ։

Աշխատանքը պատրաստելիս դասատուի կողմից տրվում են անհատական և ընդհանուր բացատրություններ և առարկայի ցուցադրում։

3. Բանվածքների կառուցումը։ Պատրաստելու համար նախագծված բանվածքի նման մեկ պարզ բանվածքի կոնստրուկցիան ուսումնասիրել, նրա կառուցման հիմնական ետապները մշակել կառուցման սիեման, ընտրել նյութը, ուսումնասիրել առանձին մասերի դետալները, կազմել ծրագիրը։

4. Զեռք բերած գիտելիքների և ունակությունների գործադրությունը բանվածքներ պատրաստելիս։

Պատրաստելու համար հանձնարարվելիք իրերը փոխանցիկ մեխանիզմների մողելներ, ախտակենտրոն, մեղեխ (կրիօշիպ) գործիքներ մեխանիկայից (թեք հարթություն), աշակերտների կողմից ընտրած առարկաներ, վարոնք վորոշ նորություն են մտցնում կոնստրուկցիայի տեսակետից մեխանիզմների վերանորոգում (կողպեք, հեծանիվային սարքավորում, կարի մեքենա)։

Աշխատանքների բնութագրությունը։ Աշխատանքը տարվում է անհատորեն, ուշադրություն պետք է դարձնել աշակերտների տեխնիկական զարգացման և նրանց տեխնիկական ձեռներեցության վրա։

Ամեն կերպ պետք է խրախուսել յեղած մեխանիզմների զա-

նազան մասերն ողտագործելու փորձերը (ժամացույցի, մեկանոյի, հեծանիվի, իրենց տներից կամ արհեստանոցից բերած այլ բաների մասերը) այն խմաստով, վորպեսզի տեխնիկական բնույթի աշխատանքը կենտրոնացվի պակաս մասերը լրացնելու վրա և աշակերտի ակտիվությունը ուղղված լինի գլխավորապես կառուցողական գծով: Ցանկալի յե մետաղի կոմբինացիան փայտի և ելեկտրոտեխնիկական նյութերի հետ:

Աշխատանքը կատարելու պլանը կազմում են աշակերտները, հաստատում ե դասատում, նյութերի ընտրությունը և նախապատրաստական աշխատանքները կատարում են ինքնուրույն կերպով:

Բանվածքի պատրաստելու բացարություններ և ցուցադրում. Պատրաստելու համար ընդունված բանվածքները, նրանց նշանակությունը և կառուցվածքը. ինչպես պետք ե անհատական հրահանգում ստանալ:

Ամենապատասխանատու մոմենտները աշխատանքի ընթացքում: Բանվածքը պատրաստելիս դասատուի ընթացիկ բացարությունները անհատականորեն և ֆրոնտալ ձևով (1 ժամ):

5. Եվսկուրսիա (3 ժամ). Մետաղների մշակումը խոչոր արտադրություններում. արտադրության մեջ զանազան հաստոցների գործադրությունը. աշխատանքային շարժումն ու մատուցման շարժումը բոլոր հաստոցներում, նրանց տարրերելը աշխատանքային շարժումների ինտենսիվ բնույթից: Հաստոցների միացումը միանույն բանվածք պատրաստելու համար (մեքենաների կոռպերացիա), յուրաքանչյուր հաստոց առահուղում և իրեն մատչելի յերկարագույն ձևի բանվածք ստանալը. այդ յերկարագույն պարզ ձևերի համակցումից ստացվում են ամենաքարոշ դետալներ հաստոցի վրա: Խոչոր արտադրության մեջ աշխատանքն ընթանում ե այնպես, վոր աշխատանքի բաժանումը կատարվում է կոռպերացիոն ձևով և ըստ առանձին դետալների կատարման. (բացարություններ, հաստոցների և նրանց աշխատանքների վերաբերյալ ցուցադրում արհեստանոցում, յեթե հաստոցներ կան):

3-րդ ժառարի

### III ԵԼԵԿՏՐՈՏԵխՆԻԿԱՅԻ ԵԼԵՄԵՆՏՆԵՐԸ

#### I. ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ԵՆԵՐԳԻԱՅԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ (2 ժամ)

Ելեկտրոտեխնիկան վորում ելեկտրականության որենքների գործնական կիրառումը: Ելեկտրական եներգիայի առավելությունը մյուս տեսակների համույթ: Ելեկտրական եներգիայի կիրառումը արդյունաբերության, տրանսպորտի և գյուղատնտեսության մեջ, ռազմական գործում և կենցաղում: Ելեկտրական եներգիայի կիրառումը լուսավորելու նպատակով: Ելեկտրոներգիայի գործածության աճումը և ելեկտրոշինարարությունը ԽՍՀՄ-ում:

#### II. ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՅ

##### 1. Լուսավորության ցանցի կառուցվածքը (1 ժամ)

Հաղորդագիծ՝ կարելի մեջ մանելուց մինչև լամպը: Ելեկտրահաղորդ գծի անցկացում դրսում և շենքերի ներսում. մաղիստրալ ճյուղավորումը մաղիստրալից, փոխանցող տուփեր: Ելեկտրահաշվիչ. անցկացումը ելեկտրական հաշվիչին: Ելեկտրոներգիայի հաշվառումը հաշվիչի միջոցով: Խմբային վահանիկ: Եքսկուրսիա լուսավորության ցանցին ծանոթանալու համար:

##### 2. Լարեր (1 ժամ)

Պղնձյա և ալյումուինի լարեր. լարերի տեսակները և նրանց նշանակությունը. մեկուսացած լարեր, չնուրներ, կարելներ, դանդ անցկացնելու լար:

Լարերի մեկուսացնելը: Համարձներ և ծանրաբեռնվածության (նարցիզա) նորմաները: Լարերն իրարու կայնելը և ճյուղավորելը:

Ելեկտրոմոնտաժային գործիքներ, խածիչ, տափակապունկ, կլորապունկ, պտուտակիչ, դանակ. նրանց նշանակությունը և դրանցով աշխատելու յեղանակները:

Գործնական պարապունիքներ (2 ժամ). Լարեր միացնելու և ճյուղավորելու վարժություններ. 1) մեկուսիչի համելը, 2) ծայրերի մաքրելը, 3) վոլորելը, 4) զողումը, 5) մեկուսիչի ժապավենով պատելը:

### 3. Յանցի Ելեկտրոմնտաժային պարագաները (6 ժամ)

Ելեկտրոմնտաժային սլարադաները և նրանց նշանակությունը, փամփուշաներ, խթաններ, անջատիչներ, միացնող, ապահովիչ, շտեպսելի վարդակներ և առաստաղի վարդակ: Նրանց կառուցվածքը, ելմեկուսիչներ. գաղափար խոնավ տեղերի համար գործադրվող արարատուրայի մասին:

Գործնական աշխատանքներ. Ելեկտրական ապարատուրան քանդել հավաքելու և լիցք տալու վարժություններ լամպային ռեստարներ պատրաստելու համար:

### 4-րդ քառորդ

### 4. Լուսավորության ցանց անցկացնելը (8 ժամ)

Անցկացնելու պլանը, պայմանական նշանակումները, անցկացման նշնումը, գլանակների տեղակայելը, լորերի անցկացնելը: Ելեկտրոմնտաժային ապարատուրայի տեղակայելը: Ելեկտրոգանդի անցկացման կառուցվածքը՝ եներգիան վերցնելով լուսավորության ցանցից:

Ելեկտրոլուսավորության ցանցի հետ վարդելու կանոնները, անլիտանդության միջոցները, Ելեկտրոցանցի աշխատանքների ժամանակ:

Գործնական աշխատանքներ. Ելեկտրոներգիան անցկացնելու սիստեմն կազմելը և անցկացման ու ապարատուրայի մոնտաժային ոպերացիաների վարժություններ:

1) Նշելը, 2) գլանիկները ամրացնելը, 3) շնուրների միայերակ (одножильный) լարերի ձգելը, 4) լարերը կապելը, 5) կըսցընելը, 6) զուգահեռ (գեպի լամպը) և հաջորդարար (գեպի անջատիչը) ճյուղավորելը, 7) լուսավորության ցանցի ապարատուրան տեղակայելը և լցնելը:

Վարժությունները տարբում են հետեւյալ աշխատանքներով.

1) Պատրաստել լուսավորության ցանցի ուսումնական սխեմաներ:

2) Դպրոցում անցկացնել զանգային սիգնալիզացիա, ոգտվելով լուսավորության ցանցից: Վերանորոգել Ելեկտրոզանդի սիստեմը:

3) Վոչ բարդ աշխատանքների լուսավորության ցանցի վերանորոգման գծով. անջատիչների, փամփուշտների, շտեպսելի տեղակայելը, լարերի ամրացնելը:

4) Ելեկտրոֆիկացիայի յենթարկած պլակատներ, աշխատական ներ, աշխարհագրական քարտելներ, լուսավորմած լոգունդներ կազմելը:

5) Ֆիզիկական կարևոստների Ելեկտրոսեխնիկական մուլեններ, պատրաստելը և վերանորոգելը:

6. Սեղանի լամպեր և տաքայնող պարագաներ պատրաստելը և վերանորոգելը:

Ծանոթություն. — Ելեկտրոստեխնիկայի դասին մուլեններ, տաքայնող պարագաներ և նման այլ բաներ պատրաստելու անհրաժեշտ է դասին առնել մոնտաժային աշխատանքները, իսկ փայտի և մետաղի աշխատանքները տարվում են համապատասխան արհեստանոցում՝ արտադրույցական ժամերին:

### III. Ելեկտրականացներ (2 ժամ)

Գաղափար Ելեկտրակայանի կառուցվածքի մասին, գաղափար Ելեկտրոներգիայի արտադրության և մինչև սպառողը անցկացնելու մասին. խոշոր Ելեկտրակայանների կառուցումը ԽՍՀՄ-ում, Վոլխովի, Դնեպրի, Ռիոնի, Քանաքեռի և այլն: Ծանոթություն տուրբինոգեներատորների, արանսֆորմատորի, բարձր լարման գծի բաշխման վահանի, լարերի անջատիչների և ապարատուրայի կառուցվածքի հետ: Անվտանգության միջոցառումներ (զրույց գիտակողիմներ ցուցադրելով):

Եքսկուրսիա դեպի Ելեկտրոկայան կամ մոտորոգեներատուրային ցեխը:

### Ութերորդ գասարան (32 ժամ\*)

#### 1-ին քառորդ

### ՄԵՏԱՂՆԵՐ, ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵԿՄԱԿՈՒՄԸ

#### I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

Զանազան նյութերի մշակման ժամանակ գործադրվող պրոցեսների բնութագրումը: Տեխնոլոգիայի հիմնական բաժինները:

\* Օւսման պլանով նախատեսնված և 21 ժամ:

1. Զուգունի արտադրությունը. Զուգուն ստանալու սկզբնական նյութերը, հանք, վառելիք, ֆլյուսներ: Դոմնային վառարանի կառուցվածքի սխեման, նրա ընդհանուր կազմությունը: Դոմնային պրոցես. նրա քիմիկմը (գաղափար գլխավոր ռեակցիաների մասին): Դոմնային պրոցեսի սպասարկումը: Աշխատանքների մեքենայացումը: Դոմնային արտադրության հիմնական և կողմնակի արտադրանքները:

1) Զուգուն՝ ձուլարանային և վերամշկավող, 2) վակներ և գաղեր, նրանց ոգտագործումը:

## 2-րդ ժառարդ

2. Պողպատի արտադրությունը. Կոնվերտորային ձևով պողպատ ստանալը, դրա եյությունը, կոնվերտորի կառուցվածքի սխեման: Հասկացողություն թթու և հիմքային պրոցեսների մասին: Պրոցեսի ընթացքը և նրան ուղեկցող քիմիական ու ջերմացին յերևույթները:

Մարտենյան պրոցեսը և նրա եյությունը: Մարտենյան վառարանի կառուցվածքը և աշխատանքը:

Ելեկտրոպրոցես: Գերույթի աղեղային վառարանի կառուցվածքի սխեման: Կոնվերտորային, պողպատի, մարտենյան պողպատի և ելեկտրապողպատի համեմատական բնությունը:

Գաղափար չուգունից պողպատ վերամշակելու այլ միջոցների մասին (ձուլարանային, պունդլինգային և հալոցային):

3. Այլումին ստանալու սկզբունքը:

4. Խորհրդային մետաղագործությունը և նրա նվաճումները:

5. Եքսկուրսիա դեպի մետաղագործական գործարանը հետևյալ թեմայի շուրջը. «Զուգունի արտադրությունը» կամ «պողպատի արտադրությունը», նայած գործարանի աշխատանքի բընույթը: Եքսկուրսիա կաղմակերպելու հնարավորություններ չինելու դեպքում կինոֆիլմի ցուցադրում. չուգունի և պողպատի արտադրությունը կամ նույն վերնագրով դիապոզիտիներ:

## 3-րդ ժառարդ

III. ՄԵՏԱՂՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՅԵՎՆԻՍՆ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ (12 Ժամ)

1. Մետաղների մեխանիկական հատկությունները. Մետաղների գործադրությունը մեքենաշինարարության մեջ և նորակառուցումների: Մետաղների հիմնական հատկությունները. առաձգականությունը, մածուցիկությունը, կարծրությունը, փիլունությունը: Հասկացողությունը մետաղի ամրության ու կարծրության փորձարկման մասին: Մանրաբեռնման տեսակները: Թույլատրեմի և քայլքայիչ լարվածությունը: Գաղափար գեֆորմացիայի 5 տեսակների մասին:

2. Մեխանիկական հատկությունների կախումը մետաղի կազմությունից ու բաղադրությունից. Հասկացողություն խառնածույթի մասին: Յերկաթաածխածնային խառնածույթը: Հասկացողությունը կառուցվածքի մասին: Ածխածնի, ծծմբի, ֆուֆորի և յերկաթաթթվի աղղեցությունը պողպատի հատկությունների վրա: Ածխածնային և հատուկ պողպատների: Հասկացողությունը գերարծը խառնածույթների մասին: Գունավոր մետաղների խառնածույթներ, բրոնզի, լատունի և ալյումինի խառնածույթներ:

3. Մետաղների հատկությունների փոփոխությունը ջերմացին մշակման յեղանակով, թավում, մխում, բացթողում: Այդուղերացիաների ժամանակ կատարվող փոփոխությունները և ոպերացիաների կատարման ընթացքը: Հասկացողություն ցեմենտացման և կոելի պողպատ ստանալու մասին:

4. Եքսկուրսիա դեպի գործարանի մեխանիկական լաբորատորիա հետեւյալ թեմայի շուրջը «մետաղների մեխանիկական հատկությունների փորձարկումը»:

Եքսկուրսիա կաղմակերպելու հնարավորություններ չինելու դեպքում, պետք ե. ցուցադրել մետաղների մեխանիկական հատկությունների (կարծրության, կոելիության, վոլորվելու) փորձարկումը՝ պարզ ինքնաշեն գործիքների ոգնությամբ:

IV. ՄԵՏԱՂՆԵՐԻ ԶԵՌՔՈՎ ՅԵՎ ՀԱՍՏՈՅՆԵՐՈՎ ՄՇԱԿԵԼԻ.  
(10 Ժամ)

Հաստոցով աշխատելու ունակություններ. Բանվածքի տեղակայումը հաստոցում, փամփուշտում և կենտրոններում: Հաստոցով մշակվող բանվածքները չափելը մասշտաբային քանոնով, հաստաշափով (կրոնցիրկուլ), ներսաշափով (նուտրոմետր), ձողակարկինով: Յենթարկալի, սահուղու շարժումների կարգավորումը, կառանի պատուտակով, առջևի և յետելի կորանի կենտրոնների զուգագիրման տառապումը: Հաստոցը պահանջված արագություն ստանալու համար տեղակայելը, փոփոխելով փոկը մեկ աստիճանից մյուսը և պերեբորը կցելով: Հաստոցը խնամելը և նախադրուշական միջոցները: Կտրիչը տեղակայումը: Մշակվող դետալների կենտրոններ նշանակելը: Գրանաձեւ շրջատաշում: Բանվածքի ճակատը կտրելը բանվածքը յենթարկելը դրագագում:

Ծանոթություն.—Դպրոցում ֆրեզերի կտմ ունակելու հաստոց լինելու գեղքում, աշակերտաները նրանց վրա կատարում են հնարապոր աշխատանքները, շրջապատող հաստոցի վրա աշխատելու հետ զուգընթաց:

Մոնտաժային հավաքման պրացեսի ունակությունները տըրպում են հեծանիվի կամ շրջատաշ հաստոցի, ալտոմորիլի, տրակտորի, գյուղատնտեսական մյուս մեքենաների, կենցաղային մեխանիզմների, ֆիզիկայի գործիքների մասերը քանդելու հավաքելու և վերանորոգելու վարժությունների միջոցով:

Կտրմակերպչական և կառուցրդական տեխնիկական բնույթի ունակություններ. Բանվածքի համար նյութ ընտրելը կախված է բանվածքի նշանակությունից և գերից: Բանվածքը պատրաստելու տեխնոլոգիական պրոցեսի մշակումը 2—3 հոգուց կազմված խմբակի միջոցով: Բանվածքի առանձին դետալները մշակելու յեղանակը սահմանելը: Բանվածքում մտցնել կառուցվածքային փոփոխություններ, տարով դրա հիմնավորումը: Կազմել աշխատանքային գծագիրը, վորոշել բանվածքը պատրաստելու համար պահանջվող ժամանակը: Աշակերտների կողմից ձեռք բերած ունակությունները ամրացվում և յուրացվում են կենցաղային ուսումնական և տեխնիկական բնույթի բանվածքների համար դետալներ պատրաստելու, հավաքելու և վերանորոգելու միջոցով:

Աշխատանքի ոբյեկտները (իրեր). Լաբորատորական ստատիլ (Գեյ-Լյուսակի տիպի), կենտրոնախույզ մեքենա, նրա պարագաները: Ուռակոտի կանոնավորիչ չորանոց ողեր, ռադիունիչի համար փոփոխական դատողության կոնդենսատոր, սեղանի ելեկտրական լամպա, ելեկտրական զոդիչ, կողմաների: Արտադրական և կենցաղային մեխանիզմների վերանորոգում և մոնտաժ:

## 9-րդ գասարան (42 Ժամ)

## I. ՄԵՏԱՂԻ ՄՇԱԿՈՒՄՆ Ս.Ա.Ա.Ն.Յ ՏԱՇԵՂ ՀԱՆԵԼՈՒ (4 Ժամ)

1. Գրտնակելը վրապես հիմնական պրոցես տեսակավոր պողպատ ստանալու համար: Գրտնակման նշանակությունը և աշխատելու յեղանակը:

2. Դարբնոցային գործ. մետաղների դարբնոցային մշակման կիրառումը: Տաքացնելու հարմարանքները. դարբնագործական ողերացիաները. մեքենայական մուրճերը. շարժահաղորդ, շողեշալում, գաղափար դրոշման մասին:

3. Զուլման գործը. Զուլման նյութեր, ձուլման արտադրության հիմնական ետապենը. կաղապար, մետաղի լարերը, կաղապարները լցնելը, մողելները, ձեռքի և մեքենայական կաղապարում:

Վագրմանկա, նրա կառուցվածքը և աշխատանքները. հասկացողություն ձնշման տակ ձուլելու մասին:

4. Եքսկուրսիա գործարանի գրտնկման, դարբնոցային ցեխերը, ձուլարան, հետևյալ թեմայով:

1) Մետաղի ջերմային մշակումը, եքսկուրսիա կազմակերպելու անհնարինության դեղքում ցույց տալ դեալողիտիվներ և նկարներ:

## II. ՄԵՏԱՂԻ ՄՇԱԿՈՒՄԸ ՏԱՇԵՂ ՀԱՆԵԼՈՎ

1. Հիմնական տեղեկություններ մետաղ կտրելու վերաբերյալ (6 Ժամ)

Ժամանակակից հաստոցներում գործադրություղ կտրող գործիքների տեսակները, կտրիչներ, ծակիչներ (գայլիկոն, բուրդուլ):

Հասկացողություն կտրող գործիքի աշխատանքի մասին, վորպես սեպի: Կտրիչի անկյունները: Կտրելու պրոցեսը և տաշեղների առաջանալը, կտրելու խորությունը, մատուցումը, տաշեղի հատվելն ըստ լայնքի, կտրելու արագությունը, կտրելու պրոցեսի ժամանակ առաջացող ուժերը:

## 2-րդ քառորդ

### 2. Հիմնական կինեմատիկ հասկացողություններ (4 ժամ)

Կինեմատիկ զույգ շղթա, մեխանիզմ. շարժման հաղորդումը, շարժման մեջ մի ձևի վերածումը մյուս ձևի:

#### 3. Շարժման հաղորդումը և ձևափոխումը (6 ժամ)

ա) Շարժման հաղորդումը զուգահեռ հոլանների միջև ձկուն կապով: Փոկանիվներ՝ տանող և տարվող. պտույտների քանակի և փոկանիվի տրամադրի կախումը: Փոխանցման թիվը, շարժման փոխանցումը մի քանի զույգ փոկանիվներով: Փոկի սահումը, դրա պատճառները, սահումը պակասեցնելու միջոցներով:

Հաղորդումն առաջալոր գլանաձև անիվների միջոցով. հաղորդում մի զույգ ատամնավոր անիվներով: Հաղորդումների թիվը, հաղորդումը մի քանի զույգ ատամնավոր անիվներով: Միջակա ատամնավոր անիվներ:

բ) Շարժման հաղորդումը խաչաձև փոկանիվների միջև և անկյունի տակ: Փոխանցումը ձկուն կապով, ատամնավոր կոնային անիվներով վորդնաշաղորդում. Հուկի հոդակապը:

գ) Մեկ ձևի շարժման ձևափոխումը մյուսի, պտուտակ և գայլիս, ատամնավոր անիվ և ձողաքանոն, մեղեխա-շարժաձողային մեխանիզմ, պտունցքներ և արտակենտրոններ:

## 3-րդ քառորդ

### 4. Մետաղակտուր հաստոցներ (12 ժամ)

Մետաղակտուր հաստոցները, վորպես մեքենաներ. նրանց հիմնական տարրերը.

#### 1) Շարժիչ, 2) փոխանցող մեխանիզմ, 3) բանող մաս:

Հաստոցները գլխավորապես պտտական շարժումներով, Փրեր, ծակիչ, դրվագող, բ) գլխավորապես ուղղագիծ շարժումով (ռանողող, փորող):

1. Խառատի հաստոցներ. Խառատի հաստոցի կազմությունը: Գլխավոր կինեմատիկ հանգույցներ արագությունների տուփ. մատուցման տուփ, արտումատիկ մատուցման մեխանիզմ:

2. Ֆրեգերի հաստոցներ. հաստոցի կազմությունը: Հենոց և կնծիթ, իլիկ (չպինդել), սեղան, սեղանի ավտոմատիկ մատուցման մեխանիզմը: Արագությունների և մատուցելու տուփ: Ֆրեգերի տեսակները: Բանվածքներն ամրացնելը: Գլխավոր ֆրեգերային աշխատանքներ, մակարդակ, ակոս, ատամնավոր անիվներ, պարույր, ֆրեգելը:

3. Ռանդելու հաստոցներ.— ըստ լայնքի ռանդող հաստոց. ռանդելու հիմնական աշխատանքները:

4. Եքսկուրսիա դեպի գործարանի մեխանիկական ցեխը, կամ ՄՏԿ-ների վերանորոգման արհեստանոցը «մետաղակտուր հաստոցներ» թեմայի շուրջը:

## 4-րդ քառորդ

### III. ՄԵՏԱՂԻ ԶԵԽԻ ՅԵՎ ՀԱՍՏՈՑԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՄԸ ԴՊՐՈՅՑԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐՈՒՄ (12 ժամ)

Դետալների ստուգումը ըստ գծագրի, փորակների ստուգումը փորակաչափով, անկյունաչափով ոդտվելը, պտտվող դետալների հավաքելը, նորմալ և գնդակավոր առանցքակալների տեղակայելը. առաջ շարժվող դետալների հավաքելը (յենթակալի սահուղի մեղեխա-շարժաձողային մեխանիզմի):

Կոնաձև ըրչատաքելը, գլանաձև տաշելը, մակարդակը և վրակը Փրեգելը և ռանդելը. բանվածքը Փրեգերում և ըրջատաշ հաստոցներում տեղակայելը, բաժանման գլխիկի հաշվարկը:

Կաղմակերպչական և կառուցողա-տեխնիկական բնույթի ռունակություններ, բանվածքը պատրաստելիս տեխնոլոգիական պրոցեսն անհատականորեն մշակելը:

Բանվածքի համար նյութի ընտրությունը, մշակելու համար սահմանված բացթողով, բանվածքի կոնստրուկցիան ինքնուրույն կերպով ձևավորելը: Ձեռք բերած ռետակություններն ամրացնելը ընթանում և գետալները պատրաստելիս և բանվածքը համարքելիս դպրոցական արհեստանոցում և արտադրության մեջ: Մեխանիկական ցեխ, գործարանի վերանորոգման ցեխ, ՄՏԿ-ի արհեստանոց, գարաժ և այլն:

Աշխատանքի որյեկտները դպրոցական արհեստանոցում։  
Պարզ կառուցվածքի հաստոցներ դպրոցի արհեստանոցը սարքա-  
վորելու համար կլոր սղոց, մեխանիկական նրբասղոց, ռանդող  
հաստոց փայտի համար, շրջատաշ հաստոց փայտի համար, Փե-  
ղիկական պարագաներ, կինեմատիկայի մեխանիկական մոդել-  
ներ, հաստոցների հարմարանքներ (որինակ, կլոր սղոցի, շրջա-  
տաշ հաստոցի համար)։

#### 10-րդ դասարան (42 ժամ)

1-ին քառորդ

#### ԵԼԵԿՏՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԱՐՐԵՐԸ

##### I. ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (2 ժամ)

Լուսյի ելեկտրական աղբյուրը. լուսառեխնիկական միավոր-  
ներ, լամպերի տեսակներ, լուսյի հրավառ աղբյուրները, լամպե-  
րի խնայողությունը։ Լուսավորություն անցկացնելու համար  
անհրաժեշտ արմատուրան, լուսավորության նորմաները։ Բաշխ-  
ման ցանցի կառուցվածքը։ Լամպերի զուգահեռ և հաջորդական  
միացումը։ Ծանրաբեռնումը գծում։ լարերի լարման անկումը,  
լարերի հաշիվը։

Գործնական աշխատանիներ (4 ժամ)

- Վորոշել լարման անկումը լարերում։
- Զարկել մեկուսիչի դիմադրությունը։
- Զարկել շիկացման լամպի կլանած ուժը։
- Հաշվել լամպի ծախսած եներգիայի արժեքը։

##### II. ԵԼԵԿՏՐՈՁԵՌՈՒԹՅԻՉ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵԼԵԿՏՐՈՎԱՐԱՆՆԵՐՆ ՅԵՎ ԵԼԵԿՏՐԱՎԵՌԻ (2 ժամ)

Հոսանքի ջերմային գործադրությունը արդյունաբերության  
մեջ և կենցաղում։ Տաքացնող կենցաղային գործիքների կառուց-  
վածքը։ Հասկացողություն ելեկտրոֆառարանի կառուցվածքի  
մասին. աղեղային, ինդուկցիոն և դիմադրող ելեկտրայեռ։ Ելեկ-  
տրայեռի նշանակությունը արդյունաբերության մեջ։

Գործնական աշխատանիներ (2 ժամ)

1. Տաքացնող գործիքի ՈԳԳ-ի վորոշելը (ոգտակար գործո-  
ղության գործակից)։

2. Ուսումնական զողիչ-տրանսֆորմատորի վրա յուրացնելու  
վարժություններ։

2-րդ քառորդ

#### III. ԵԼԵԿՏՐԱՎԱՐԱԿ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ (2 ժամ)

Մտուդող և չափող գործիքների նշանակությունը ժամանա-  
կակից արտադրության ելեկտրոսարքավորման գործում։ Զափող  
գործիքների գործողակիցը սկզբանական։

1. Մագնիսաելեկտրական, 2) Ելեկտրո-մագնիսական, 3) Ե-  
լեկտրոդինամիկ, 4) ջերմային, 5) ինդուկցիոն։ Գործիքների  
դասակարգումը և ճշուաթյան սահանքն այս կամ այն տեսակի  
գործիքների նկատմամբ։ Մեխանիկական չափող գործիքների կա-  
ռուցվածքը ամպերաչափի, վոլտաչափի և վատաչափ։ Գործիք-  
ների ցուցնակները. հավասարաչափ, անհավասարաչափ, յերկ-  
կողմանի։ Բաժանումի գինը, սլաքների խաղաղիչները. ողային  
և մագնիսական։ Գործիքը զերոյի վրա դնելը, տեխնիկական գոր-  
ծիքների պայմանական նշումները. գործիքները ներառելու սխե-  
ման։

Գործնական աշխատանիներ (4 ժամ)

Կարողանալ բացատրել գործիքների պայմանական նշանները.  
Հոսանքի լարման ուժի և էներգիայի ծախսման չափելը։

Զափող գործիքների ստուգումը, յերկու ամպերաչափերի  
ցուցումների համեմատությունը և սխալների գրաֆիկ կազմելը  
կամ հաշվիչի ստուգումը վատաչափի, կամ վոլտաչափի, կամ  
ամպերաչափի ցուցումներով։

#### IV. ՀԱՍՏԱՏՈՒՆ ՀՈՍԱՆՔԻ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ (2 ժամ)

Հաստատում հոսանքի գեներատորի կառուցվածքը. մեքենա-  
ների հիմնական մասերը, ելեկտրամագնիսական սիստեմը, խա-  
րիսխ, կոլեկտոր, խողանակներ, հանկացողություն ինարիտի,

ունակցիայի և լրացուցիչ բևեռների մասին, մեքենաներ՝ սիրի-  
յան և շունտի, այդ մեքենաների տարբերական առանձնահատ-  
կությունները. հաստատուն հոսանքի մեքենաների գործադրու-  
թյունն արտադրության մեջ:

### Գործնական աշխատանիներ (2 ժամ)

Պարզել մեքենայի պասպորտը. դրոշմաստախտակի վրա վո-  
րոշել փաթեթի ծայրերը: Գեներատորն աշխատեցնելը և լարու-  
մը. շունտի ռեստատով կարգավորելը դատարկ ընթացքի բնու-  
թագիրը:

### Յ-րդ քառորդ

#### Մշտական հոսանքի մոտորները (1 ժամ)

Մոտորների տիպերը. Սիրիյսի և շունտի, նրանց բնութա-  
գրությունը և գործադրությունն արտադրության մեջ: Մոտոր-  
ները միացնելու սինեման: Մոտորը գործի գցելը: Գործի գցող  
ռեստատի նշանակությունը. պտույտների քանակը կամոնավո-  
րելը. շարժման ուղղություն փոխելը: Մոտորը ինամնելը:

#### Գործնական պարապմունիներ (2 ժամ)

Քանդված մոտորի հիմնական մասերի կառուցվածքի նկարա-  
գրությունը: Փաթեթների ամբողջությունը ստուգելը. լամպի  
ողնությամբ: Բանեցման (ПУСКОВОЙ) սինեմայի հավաքելը և մոտո-  
րը բանեցնելը: Պտույտի ուղղությունը փոխելը:

### Վ. ՓՈՓՈԽԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԻ ՄԵՔԵՆԱԿՆԵՐ (1 ժամ)

Փոփոխական հոսանք ստանալը, փոփոխական հոսանքի գոր-  
ծադրությունն արդյունաբերության մեջ: Ոմական և ինդուկտիվ  
ծանրաբեռնվածություն փոփոխական հոսանքի շղթայում. հաս-  
կացողություն տարրողության և ինքնախնդուկցիայի մասին:  
Հասկացողություն տեղաշարժի մասին (կոսինուս «Փի»): Փոփո-  
խական հոսանքի հզորությունը:

Յեռափաղ հոսանք. — Ֆաղերը աստղաձև և յեռանկյունաձև  
միացնելու յեղանակները: Ֆաղային և գծային լարումներ և հո-

տանքի ուժը: Յեռափաղ հոսանքի հզորություն: Յեռափաղ հո-  
սանքի առանձնահատկությունները և դրա գործադրության շա-  
հավետությունը:

#### Գործնական աշխատանիներ (2 ժամ)

Ֆաղերի տեղաշարժի վորոշելը. ինդուկցիոն և վոչ ինդուկ-  
ցիոն (լամպային բեռստատի և ինդուկտիվ կոմի ծանրաբեռնվա-  
ծությամբ):

Հոսանքի ընդունիչի (լամպի) ներառումը աստղաձև և յեռան-  
կյունաձև: Ֆաղային և գծային լարումների ու հոսանքի ուժի  
վորոշելը:

### VI. ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐՆԵՐ (2 ժամ)

Միափաղ հոսանքի տրանսֆորմատորի կառուցվածքը: Տը-  
րանսֆորմացիայի գործակիցը: Կորուստները տրանսֆորմատո-  
րում: Տրանսֆորմատորի ՈՒԳ: Հասկացողություն յեռափաղ  
տրանսֆորմատորի մասին, տրանսֆորմատորները սառեցնելու  
յեղանակները:

Գործնական աշխատանիք. — Տրանսֆորմացիայի գործակիցի վո-  
րոշելը. յերեք միափաղ տրանսֆորմատորների միացումն աստղա-  
ձև և յեռանկյունաձև:

#### Ասինյորն շարժիչներ (2 ժամ)

Հասկացողություն պտույտի մագնիսական դաշտի մասին.  
ասինյորն հոսանքի գործողության սկզբունքը: Մոտորներ կարճ  
ու մակար և ֆաղային ուստորով: Շարժիչ ուժի կախվածությունը  
փաթեթների միացնելու յեղանակից: Ելեկտրոշարժիչը միացնե-  
լու սինեման: Շարժման ուղղությունը փոփոխելը. բանեցնելու  
հարմարանքները. մոտորի «Փի» կոսինուտի կախումը ծանրա-  
բեռնվածությունից: Փոփոխական և անփոփոխ հոսանքի մեքե-  
նաների նմանությունը և տարրերությունը. փոփոխական և ան-  
փոփոխ հոսանքի մեքենաների գործադրությունն արտադրության  
մեջ:

Գործնական աշխատանիներ (2 ժամ). Մոտոր, թե մոտորը  
կանոնավոր վիճակումն ե, թե վոչ. Ֆաղային փաթեթների ծայ-

բերը վորոշելը : Վորոշել բնեռային զույգերի թիվը . քանդածմոտորի հիմնական մասերի կառուցվածքը նկարագրելը . վորոշել յեռափաղային մոտորը բանեցնելու սիեման : Վորոշել հոսանքի լարումն ու նորման ուժը աստղով և յեռանկյունով միացնելիս : Ռոդորի պտտվելու ուղղության փոխվելը հորության դործակցի համեմատության տարրեր ծանրաբեռնալածության ժամանակ :

4-րդ ժառարի

#### VII. ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵջ (2 ժամ)

1. Ծանոթություն ձեռնարկության ելեկտրասարքավորման հետ :
2. Դիտումներ մոտողեներացիայի և բաշխիչ վահանի մասին :
3. Դիտումներ ելեկտրավերանորոգման ցեխի աշխատանքների վերաբերմաբ :
4. Աշխատանքը հերթապահ մոնույորների բըլիգադում :
5. Դիտումներ ելեկտրոյեռի ցեխում :

#### VIII. ԱՎՏՈՄՈԲԻԼԻ ԵԼԵԿՏՐԱՍԱՐՔԱՐՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

Ելեկտրոլուսավորության սարքավորումը, դինամո, ակումբույսոր : Լուսավորության անցկացնելը, վառելու սիստեմը, կոճը (బօնիա) : Ընդհատիչ և բաշխիչ, մոմեր, ստարատեր : Շշակի : Հոսանքը միացնելու և անջատելու հարմարանքները : Եխկուրսիա դեպի դարաժի վերանորոգման արհեստանոցը :

Ծանոթույուն .— Տեղական պայմաններից կախված՝ «ավտոմոբիլի ելեկտրասարքավորումը» թեմայի փոխարեն կարելի յեն անցնել «տրակտորի ելեկտրասարքավորումը» թեման :

#### IX. ՌԱԴԻՈ ՏԵԽՆԻԿԱ (2 ժամ)

Անտենայի և հողի հետ միացնելու կառուցվածքը դեղեկտորացին ընդունիչների սիեմաները : Լամպային ընդունիչներ : Հակառակ կապի դործաղությունը ցածը հաճախականության դո-

րացուցիչը : Բարձալամպային ընդունիչներ . ընդունիչների սընվելը ցանցից մարտկոցով : Ռադիո ընդունիչ դնելը, խնամելը և բացերը վերացնելը : Ընդհանուր հասկացողություն կարճ ալիք հաղորդման մասին :

Գործնական պարապմունքներ (2 ժամ )

Ընդունիչների հավաքելը՝ 1) դետեկտորային ընդունիչ, 2) լամպային ընդունիչ, 3) ընդունիչ հակառակ կապով . 4) ցածը հաճախականության դորացուցիչ . ստուգել դպրոցի ռադիոյի կանոնավոր մինելը և կատարել փոքր վերանորոգում :

#### X. ԵԼԵԿՏՐՈՏԵԽՆԻԿԱ. ՑԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅՈՒԹՅՈՒՆ (1 ժամ )

ԽՍՀՄ-ի ելեկտրիֆիկացիայի նշանակությունը ժողովրդական տնտեսության վերակառուցման գործում . կարիտալիստական ելեկտրատեխնիկան լրիվ զարգացնելու անկարելիությունը կապիտալիստական պայմաններում : Ելեկտրաներգիայի հեղափոխական դերը : Ելեկտրոներգիայի դործաղրման աղղեցությունը տեխնոլոգիական պրոցեսների և մեքենաների կառուցվածքի վրա : Ելեկտրոներգիայի տեղը արտադրական պրոցեսների ղեկավարման և ստուգման մեջ : Ելեկտրոներգիայի դերը արտադրական պրոցեսների մեքենայացման և ավտոմատիզացիայի յենթարկելու դործում :

Ծանոթույուն .— Ցեթե հնարավոր չե այս կամ այն աշխատանքը գործականորեն դնել տվյալ դպրոցում, դաստիճան սահմանափակվում ե ցուցադրումով (կինոՓիլմ, պլակատ և այլն) :

Գործնական աշխատանքները դպրոցում մասամբ կարող են փոխարինվել աշակերտների կողմից արտադրության մեջ կատարած դիտումներով ու կարող են կրծատվել, ձևափոխել կախված դպրոցի սարքավորումից :

Գործնական աշխատանքներ (2 ժամ )

- 1) Ֆիզկարինետի սարքավորումը լրացնելու ուղղությամբ ցուցադրական իրեր, 2) փոքրիկ մեքենաների ողտագործում, ինչպես որինակ՝ ավտոյի, դինամո մեքենայի ակումուլյատորին լիցք տալու համար, դինամո տրակտորը լուսավորելու համար : Ենուափագային հոսանքի մոտորներ :

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ

ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՅ

Ա

- Արշտ—Порок  
 Ակոս—Резьба  
 Արդյունավետություն—Продуктивность  
 Արդեմանիլ—Храповик  
 Առանցքակալ—Подшипник  
 Աղեղնասղոց—Лучковая пила  
 Աղեղային—Дуговой  
 Ազուցահան—Шпунт-гобель  
 Ակոսահան (ռանդա) Фальц-гобель

Բ

- Բնափայտ—Древесина  
 Բեռնափորում—Нагрузка  
 Բոնող մոմ—Запальняая свеча  
 Բոնող մոմ—Запальняая свеча  
 Բթ կ—шип  
 Բոլորակուր սղոց—Циркулярная пила  
 Բանվածքային—Подслочный  
 Բացթող—Пропуск  
 Բրեչ—Мотыга  
 Բութակ—Шаш-шуруп  
 Բանվածք—Изделие  
 Բարձակ—Кроштейн

- Գլանիկ—Ролик  
 Գլդոն—Болванка  
 Գրտնակելը—Прокатывать  
 Գամել—Заклепать  
 Գչիր—Дрель

Գ

- Դաղդյան—Верстак  
 Դիմացկունություն—Прочность  
 Դարձում—Поворот  
 Դետալ—Деталь

Դ

- Թաղում—Отжиг  
 Թափանիլ—Маховик  
 Թե է ք—Откосный

Թ

- Ժանանիլ (ատամնանիլ)—Шестерня

Ժ

- Իլիլ—Шпиндель, веретено  
 Իրն—Корпус

Լ

- Լիցք—Заряд  
 Լիւեռ—Вал

Լ

- Խածիչ—Кусачка  
 Խառնաճույլ—Сплав

Հաշածւմ—Скрепление  
Խոտան—Брак

Թ

Եղելը—Изгибать  
Եղելլ—Сверлить, пробивать отверстие  
Երտու—Насечка  
Եղկ հատ—Бородок

Կ

Կորտի—Бабка  
Կոռանի—Стопорный  
Կոճիթ—Хобот  
Կորդիչ—Муфта  
Կյու—Крюк, крючок  
Կապտավուն տեսք—Синева  
Կլանելու ընդունակություն—Поглощающая способность  
Կեչի—Береза  
Կորիչ—Резец  
Կորելլ, հանել—Нарезать  
Կանգնակներ—Стойки  
Կերաբաժին—Кормовая дача  
Կերպարանափոխում—Трансформирование, преобразование  
Կորդան—Мотовило

Ձ

Հաստատուն հոսանք—Постоянный ток  
Հրիչ—Толкатель  
Հենոց—Станина  
Հարմարնք—Приспособление  
Հաստաչոփ (կորակարկին)—Кронциркуль  
Հոլան (գլան)—Вал  
Հավաքելլ—Уборка

Հզորություն (կարողություն)—Мощность  
Հերուն—Шило  
Հնձող մեքենա—Жнейка  
Հեղույս—Болт  
Հմկողություն—Падзор  
Հաշվառում—Учет  
Հենակ—Подручник  
Հատապուց—Ягода  
Հաղարջ—Смородина  
Հաղորդիչ—Проводник  
Հակակիւն—Противовес  
Հողակապ—Шарнир  
Հաստոց—Станок  
Հատիչ—Резец  
Հատում—Рубка  
Հերկ—Вспашка  
Հմմակցում—Срапивание

Զ

Զողակարկին—Штангенциркуль  
Զգում—Растяжение, вытяжка  
Զ “ զ—Рейка  
Զողային—Реечный

Ճ

Ճախարակ—Блок  
Ճուկիներ—Чеки

Մ

Մետաղաղոց—Ножовка  
Միջակտուր սղոց—Сквозная  
Մխում—Закалка  
Մատուցում—Подача  
Միջակ—Промежуточный

**Միոց**—Поршень  
**Մածոցիկովյուն**—Вязкость  
**Մեխаниզմ**—Механизм  
**Մակարդասղոցում**—Наградное пиление  
**Մատոցով մեխանիզմ**—Механизм подачи  
**Միջանցիկ կտրիչ**—Проходной резец  
**Միւրակ**—Одножильный

## ՅԵ

**Յերիդասղոց**—Ленточная пила  
**Յենթանեցուկ (յևթակուլ)**—Суппорт  
**Յեղատում**—Раззенкование  
**Յենթակալ**—Суппорт  
**Յենթակտրիչ**—Подрезной резец  
**Յերիթ**—Шпонка  
**Յերիթապոր**—Шпоночный, штифтовой

## Կ

**Կրբաղոց**—Лобзик  
**Կերսաչիփ**—Нутромер  
**Կերծող**—Всасывающий  
**Կալ**—Желоб  
**Կերքին այրում**—Внутренние сгорания  
**Կախածիլում**—Пикировка  
**Կոռացում**—Прореживание  
**Կշնում**—Разметка  
**Կերտաշում**—Расточка  
**Կչնաքաշ**—Ресимус

## Ծ

**Ծրջատաշում**—Обточка  
**Ծղթայակցում**—Сцепление  
**Ծարժահաղորդ**—Приводной  
**Ծրջանակային միացում**—Рамочное соединение  
**Ծարժաձող**—Шатун

**Շարժիչ**—Двигатель  
**Շերտային**—Полосовое  
**Շղացան**—Разбросной сев  
**Շաղափ**—Коловорот

## Ո

**Ուտիմաքրիչ**—Воздухочиститель

## Չ

**Չափրաստում**—Разводка

## Պ

**Պարագասացում**—Удобрение  
**Պնդություն**—Твердость  
**Պոռյուտ**—Оборот  
**Պարանային**—Канатный  
**Պոռւտակիչ**—Отвертка

## Զ

**Զերմոց**—Парник, теплица

## Ռ

**Ռանդելը**—Строгание

## Ս

**Սեպ**—Клин  
**Սառեցում**—Охлаждение  
**Սերպատում**—Сепарация  
**Սեղմիչներ**—Обжимки  
**Սկավառակ**—Диск  
**Սրաքար**—Точильный камень  
**Սողնակ**—Задвижка

Վորդնային—Червячный  
Վարդակ—Розетка  
Վերադիր—Накладная

۴

**Տափակապունդ**—Плоскогубцы  
**Տաշմծ**—տախտակ—Тес  
**Տեղակայէլ**—Установить  
**Տանող**—Ведущий  
**Տարվող**—Ведомый  
**Տափողակ**—Шайба

S

*Заштапи*—Подстилка

Φ

*Фи́лъе*—Обмотка  
*Фи́ксація*—Шкив  
*Фи́ксація*—Ременной  
*Фі́ксациі*—Передача, трансмиссия  
*Фі́ксациі*—Гильз  
*Фі́ксація*—Перовое сверло  
*Фі́ксація*—Нарезка

f

Քաշող ուժ—Тяговая сила  
Քերիչ—Скребница  
Քանդակագործ—Стамеска

四

**Ուսումնական ուղիղթ**—Учебная поездка  
**Ուղիղ յերթ**—Прямая езда  
**Ուժար**—Привод  
**Ոնկ**—Ушко



315

La Côte Africaine à l'ouest  
de l'Afrique  
T 1 17

574

ԳՐԱ 1 Ռ.

Программы средних школ

Т Р У Д

Для городских школ

Гиз ССР Армении, Эривань, 1936 г.

«Ազգային գրադարան»



NL0228603

45.540